NIKOLAY HOVHANNISYAN, The Armenian Genocide. Armenocide – the Most Genocidal Genocide in Ten Languages of the World. In English, French, Russian, German, Turkish, Japanese, Hungarian, Armenian, Arabic, Persian, *Yerevan, "Zangak-97" Publishing House, 2009, 856 p.*



Ականավոր գիտնական, պատմաբան, արեվելագետ-միջազգայնագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ, արտասահմանյան հինգ ակադեմիաների և մի շարք գիտական ընկերությունների և ասոցիացիաների անդամ, պրոֆեսոր Նիկոլայ Հովհաննիսյանի 450-ից ավելի գիտական աշխատությունները՝ հրատարակված տարբեր լեզուներով արտասահմանյան մի շարք երկրներում, ծանրակշիռ ներդրում են հայագիտության, արևելագիտության, հատկապես արաբագիտության, միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության ուսումնասիրության բնագավառներում: Նրա անվան հետ են կապված գիտական մի շարք ուղղությունների ձևավորումը և զարգացումը Հայաստանում: Նա պատկանում է հայ արևելագետների առաջին, ոչ մեծաթիվ փաղանգին, որի ուսերին ծանրացավ ՀՀ ԳԱԱ կազմում արևելագիտական ինստիտուտի հիմնման, հայ արևելագիտության գլխավոր ուղղությունների ձևավորման, մշակման և զարգացման ամբողջ ծանրությունը: Ն. Հովհաննիսյանն իրավամբ հայկական արաբագիտական դպրոցի հիմնադիրն է, և այդ բնագավառում նրա ուսումնասիրությունները, հատկապես «Արաբական երկրների պատմությունը VII դարից մինչև մեր օրերը» քառահատոր կապիտալ աշխատությունը (2007 թ. արժանացավ ՀՀ Նախագահի մրցանակին) միջազգային մեծ ճանաչում բերեցին նշանավոր հեղինակին: Նման աշխատություն, ինչպես խոստովանում են արաբները, անգամ իրենք չունեն: Ուստի պատահականություն չէ, որ այդ աշխատության չորս հատորներն էլ Սիրիայում արդեն թարգմանվել են արաբերեն և այժմ հրատարակման փուլում են:

Ն. Հովհաննիսյանի գիտական նախասիրությունների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Հայոց ցեղասպանության հիմնահարցերի ուսումնասիրությունը: Նա իր կյանքի 45 տարիները հատկացրել է մեր ազգի համար սկզբունքային նշանակություն և առանցքային իմաստ ունեցող այդ ողբերգական պատմության էջերի լուսաբանմանը: Հենց դրան է նվիրված նրա խնդրո առարկա հիմնարար մենագրությունը: Դա իր նմանը չունեցող կոթողային աշխատություն է: Հարցերի ընդգրկման ծավալներով, հիմնախնդիրների հետազոտության խորությամբ, եզրակացությունների մասշտաբայնությամբ և համոզչականությամբ սույն աշխատությունը եզակի երևույթ է հայ պատմագրության մեջ ընդհանրապես և հայոց ցեղասպա-

նագիտության մեջ մասնավորապես: Փաստորեն, վաստակաշատ հայ գիտնականը դրանով իր ծանրակշիռ վաստակն է ներդրել հայոց ցեղասպանագիտության՝ որպես հայ իրականության մեջ գիտական նոր ուղղության հիմնադրման, ձևավորման և գլխավոր ուղղությունների սահմանման մեջ: Դա հսկայածավալ աշխատանքի արդյունք է, և նման լուրջ գիտական արդյունքների կարող էր հասնել միայն այն մասնագետը, որը տասնյակ տարիների գիտահետազոտական աշխատանքի շնորհիվ ամբարել է մեծ գիտելիքներ, ունի տեսական-գիտական բարձր մակարդակ, տարբեր լեզուների խոր իմացություն, գիտական հիմնարար խնդիրների լուծման մեծ փորձ և հմուտ է գիտական մեթոդաբանությունը կիրառելու ամենաբարդ խնդիրների հետազոտման մեջ: Մեր կարծիքով, Ն. Հովհաննիսյանը, ինչպես վկայում է իր բնույթով նախադեպը չունեցող քննարկման առարկա մենագրությունը, տիպաբանորեն հենց այդ գիտնականներից է:

Սույն աշխատությունը ցեղասպանագիտական աշխատությունների շարքում առանձնանում է բարձր ակադեմիական մակարդակով, գիտական սկզբունքային մոտեցմամբ: Այստեղ փաստարկված են Հայոց ցեղասպանության նախապատրաստման հանգամանքները, ինչպես նաև դրա պետականորեն պլանավորված, նախօրոք ծրագրավորված լինելը: Հեղինակը հանգամանորեն անդրադարձել է Հայոց ցեղասպանության պատճառների լուսաբանմանը, բացահայտել երիտթուրքերի ազգային քաղաքականության ռասայական, մարդատյաց ծալքերը, օսմանիզմի, թյուրքիզմի և պանթուրքիզմի գաղափարների և դրանց վրա հիմնված քաղաքականության վտանգավոր էությունը, Օսմանյան կայսրությունը ոչ թուրք ժողովուրդներին ձուլելու կամ ֆիզիկապես ոչնչացնելու ճանապարհով էթնիկապես մաքուր թուրքական պետության վերածելու երիտթուրք դահիճների վերջնական նպատակները: Աշխատության այդ էջերը ուշագրավ, բացառիկ տեղեկատվություն պարունակող, օսմանյան ցեղասպան մարդատյաց քաղաքականությունը մերկացնող մասերն են, մեծապես օգնում են ճիշտ ըմբռնելու և գնահատելու երիտթուրքերի ռասայական քաղաքականության էությունը:

Ն. Հովհաննիսյանին, որպես մասնագետի, բնորոշ է նորարարությունը, հիմնահարցերի նորովի մեկնաբանումը. նա երբեք տրորված ճանապարհներով չի ընթանում: Սույն մենագրությունը նորություն է գրքի իր բազմալեզվյա թարգմանությունների աննախադեպ այս մեկտեղումով: Ոչ միայն արևելագիտության, այլև հայագիտություն մեջ դա բացարձակ նորություն է: Հատկապես այս պարագան ավելի է ընդգծում գրքի բարձր մակարդակով գրված լինելու հանգամանքը: Ուստի պետք է հավաստենք, որ սույն գիրքը նորություն է գիտականության խորքայնությամբ, բացառիկ երևույթ գիտական բարձր մակարդակով, օբյեկտիվ հետազոտություններով և շարադրանքով: Հենց նման բարձր գիտական մակարդակն է հեղինակին բարոյական իրավունք տվել աշխարհի 10 լեզուներով միջազգային գիտական հանրությանը ներկայացնելու իրավամբ արժանի այսպիսի հետազոտություն: Փաստորեն, հեղինակը հայտնագործել է մի նոր ձև, որը պետք է համարել լավագույններից՝ Հայոց ցեղասպանությունը միջազգային հանրությանը ներկայացնելու տեսանկյունից: Ինչպես վկայում են աշխատության մեջ բազմաթիվ լեզուներով ներառված տեքստերը, շատ ընդարձակ են նրա աշխարհագրական սահմանները, սակայն մենք, որպես թուրքագետ-արևելագետ, կցանկանայինք հատկապես ընդգծել նրա թուրքերեն թարգմանությունը և հրատարակումը Ստամբուլում՝ թուրքական կողմի նախաձեռնությամբ: Դա ինքնին արդեն երևույթ է, որը մի կողմից վկայում է աշխատության բարձր մակարդակի, իսկ մյուս կողմից բուն

Թուրքիայում նոր ուժերի (գլխավորապես մտավորականության շրջանում) ձևավորման և հանդես գալու մասին, որոնք արդեն բարձրաձայն պահանջում են թուրքական կառավարությունից ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Աշխատության կարևոր նորություններից է արաբական պատմագիտական մտքի արդյունքների ներառումը երիտթուրքերի ազգային քաղաքականությունը բացահայտելիս և հայոց ցեղասպանությունը բնութագրելիս: Մինչև պրոֆեսոր Ն. Հովհաննիսյանի սույն բարձրարժեք աշխատության հանդես գալը դեռ ոչ ոք այնպիսի խորությամբ չէր օգտագործել արաբական իրականության մատուցած նյութը և արաբ պատմաբանների տեսակետները: Արաբ մուսուլմանները, ինչպես ցույց է տրված, խստորեն դատապարտում են երիտթուրքական ոճրագործությունն ընդդեմ հայերի: Նրանք 1915 թ. իրադարձությունները որակում են որպես «XX դարի առաջին ցեղասպանություն և XX դարի մարդկության պատմության սև էջը»: Արաբների տեսակետների ներգրավումը աշխատության համատեքստում կարևորվում է նաև այն հանգամանքով, որ երիտթուրքերի քարոզչությունը փորձում էր նսեմացնել եվրոպացիների աջակցությունը և թուրքական բռնարարքների դատապարտումն այն պատրվակով, թե «քրիստոնյա եվրոպացիները բնականաբար պաշտպանում են քրիստոնյա հայերին և դատապարտում թուրք մուսուլմաններին»: Արաբ մուսուլմանների պարագայում նրանց այդ «պնդումները» մտացածին էին և չէին կարող արդյունավետորեն գործել: Այս տեսանկյունից մենք շատ կարևորում ենք նաև աշխատության այն էջերը, որտեղ ցույց է տրվում արաբների ասպնջականությունը հայերի նկատմամբ, նրանց օգնությունը հայ տարագիրներին, երբ արաբները դրա համար շատ հաճախ վճարում էին իրենց կյանքի գնով: Հարկ ենք համարում այս կապակցությամբ մեջբերել Ն. Հովհաննիսյանի աշխատության այն հատվածը, որը վերաբերում է հայկական ջարդերի նկատմամբ այդ ժամանակ մուսուլմանական աշխարհի ամենահեղինակավոր մուսուլման առաջնորդի՝ Մեքքայի շերիֆ Հուսեյն իբն Ալի ալ-Հաշիմիի դիրքորոշմանը: Նա ուղղակիորեն սերում էր իսլամի հիմնադիր Մուհամմադ մարգարեից: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ առաջնորդը նամակ է ուղարկում իր որդուն՝ Ֆեյսալին, որը գլխավորում էր արաբների ապստամբությունը՝ ընդդեմ թուրքերի, նրան հիշեցնելով. «Դուք պարտավոր եք հայերին պաշտպանել այնպես, ինչպես կպաշտպանեք ձեր ընտանիքները»: Այդ նույն նամակով նա դատապարտում է երիտթուրքական ղեկավարությանը՝ մատնանշելով, որ թուրքերն իրենց արյունարբու գործերով ստվեր են գցել իսլամի վրա, դավաճանել Կորանին և սուննային: Սրանք շատ ծանր մեղադրանքներ էին, որ ներկայացվել են այդ ժամանակ մուսուլմանական աշխարհի ամենահեղինակավոր առաջնորդի կողմից երիտթուրք դահիճներին:

Կարծում ենք, որ հայ գիտնականը միանգամայն ճիշտ է վարվել, որ իր աշխատության մեջ առաջին անգամ այդքան լայն տեղ է հատկացրել՝ ցույց տալու արաբների և նրանց կրոնական ու քաղաքական առաջնորդների մարդասիրական դիրքորոշումը հայ տարագիրների նկատմամբ:

Գիտնականը նոր մոտեցում է ցուցաբերում նաև հայոց ցեղասպանության ճանաչման խնդրում, որն ունի թե՛ գիտական և թե՛ քաղաքական կարևոր նշանակություն և մեր օրերում ձեռք է բերել սուր արդիականություն: Ըստ նրա՝ հայոց ցեղասպանության ճանաչման մասին ավելի ամբողջական և հստակ պատկերացում կազմելու համար պետք է վերցնել կամ հիշատակել ոչ միայն այն երկրները, որոնց խորհրդարանները պաշտոնապես ճանաչել են այն, այլև այս կամ այն պետության մեջ ինք-

նավար կարգավիճակ ունեցող երկրամասերը, նահանգները, քաղաքապետարանները, միջազգային զանազան կազմակերպությունները, միջազգային լրատվական միջոցները և այլն: Երբ այս տեսակետից ենք մոտենում խնդրին, ապա պատկերը բոլորովին այլ է ստացվում՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչել են ոչ թե միայն 20 պետություններ, այլ մեկ տասնյակից ավելի ինքնավարություններ Ավստրալիայում, Բրազիլիայում, Իսպանիայում, Կանադայում, Մեծ Բրիտանիայում, Շվեյցարիայում, ԱՄՆ-ի 42 նահանգներ, տասնյակ քաղաքապետարաններ, միջազգային կազմակերպություններ, որոնց մեջ ներառվում են այնպիսի հեղինակավոր կազմակերպություններ, ինչպես Եվրախորհրդարանն իր չորս տասնյակից ավելի երկրներով, Եկեղեցիների միջազգային խորհուրդը, Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան և այլն: Առանձնապես կարևորվում է Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան (1994 թ.), որն արդեն 1997 թ. ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Դրանում միավորված են աշխարհի բոլոր հայտնի և հեղինակավոր ցեղասպանագետները, որոնց թիվն անցնում է 350-ից, և որի անդամ է 2005 թ. ընտրվել հայ գիտնական Ն. Հովհաննիսյանը: Սակայն հեղինակն առանձնապես կարևորում է այդ ասոցիացիայի՝ 2005 թ. Ֆլորիդայում գումարված կոնգրեսը, որի օրակարգում «90 տարի անց Հայոց ցեղասպանությունից հետո. 60 տարի անց Հոլոքոստից հետո» հարցի քննարկումն էր: Կոնգրեսը, ինչպես նշում է Ն. Հովհաննիսյանը, միաձայն հաստատեց, որ թե՛ Հայոց ցեղասպանությունը և թե՛ հրեական Հոլոքոստը պատմական իրողություններ են, ինչը ոչ ոք այլևս չի կարող ժխտել: Դրանով իսկ, ըստ տաղանդաշատ հեղինակի, աշխարհի բոլոր և ամենահեղինակավոր ցեղասպանագետները բավարարեցին հայերի երկու պահանջը կամ երազանքները. առաջին՝ «այն, ինչ պատահեց հայերի հետ 1915 թ. Օսմանյան կայսրությունում, ցեղասպանություն է», երկրորդ՝ «Հայոց ցեղասպանությունը XX դարի առաջին ցեղասպանությունն է»: Հենվելով Ֆլորիդայում ընդունված վերոնշյալ որոշման վրա՝ հայ անվանի գիտնականը եզրակացնում է. «Հայոց ցեղասպանությունն արդեն գիտականորեն ընդունված և ճանաչված է»: Սա շատ կարևոր եզրակացություն է, որին հանգել է հեղինակը, ինչը նորություն է Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում՝ այդ հարցի քննարկումը բարձրացնելով նոր մակարդակի: Մյուս կողմից՝ դա պայմաններ և նոր հեռանկարներ է բացում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում:

Աշխարհի 10 լեզուներով Հայոց ցեղասպանության վերաբերյալ լույս տեսած տեքստերի ամբողջացումը միահատորում ընդլայնում է Հայոց ցեղասպանությունը ժխտելու՝ թուրքական փորձերը տապալելու հնարավորությունները, ավելի հուժկու դարձնում թուրքական նկրտումներին հասցվող հարվածները, բազմապատկում Հայոց ցեղասպանության ճանաչման համար պայքարողների ներուժը և միջազգային առումով ավելի նպաստավոր պայմաններ ստեղծում Հայոց ցեղասպանության ճանաչման համար: Այս բազմալեզու կոթողային ուսումնասիրությունն իր հարցադրումներով և մոտեցումներով, տրամաբանությամբ կազմում է մեկ ամբողջություն և վկայում այն մասին, որ շատ ժողովուրդների վերաբերմունքը, նաև այն երկրներինը, որոնց կառավարությունները դեռևս պաշտոնապես չեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը, ինչպես Անգլիան, Ավստրալիան, Իսպանիան, Հունգարիան, Ճապոնիան, Իրանը, Եգիպտոսը և արաբական մյուս երկրները և այլն, Հայոց ցեղասպանության հարցում աստիճանաբար դրական փոփոխության է ենթարկվում: Դա վկայում է նաև այն մասին, որ Հայոց ցեղասպանության ճանաչման պաշարները

մեծանում են: Հետևաբար 10 լեզուներով լույս տեսած այս բարձրարժեք, բացառիկ նշանակություն ունեցող մենագրությունն ըստ էության ծանր հարված է Հայոց ցեղասպանությունը ժխտելու թուրքական քաղաքականությանը և, անկասկած, կթուլացնի Թուրքիայի դիրքերը՝ ավելի մեկուսացնելով նրան միջազգային ասպարեզում, և ընդհակառակը՝ կուժեղացնի Հայաստանի և աշխարհի ողջ հայության դիրքերը:

Ամփոփելով ևս նշենք, որ հայ ականավոր գիտնական Ն. Հովհաննիսյանի «Հայոց ցեղասպանություն. Հայասպանությունը՝ Ամենացեղասպան Ցեղասպանություն. Աշխարհի 10 լեզուներով» մենագրությունն իր նախադեպը և զուգահեռները չունեցող, ակադեմիական գիտական բարձր մակարդակով գրված ծանրակշիռ աշխատություն է, եզակի հետազոտական ուսումնասիրություն և կարևոր ներդրում ցեղասպանագիտության մեջ: Դա իսկապես երևույթ է, նորույթ հայ պատմագիտության, նաև հայ արևելագիտության ու ցեղասպանագիտության բնագավառում: Նա ունի կարևոր գիտական և քաղաքական նշանակություն, մանավանդ մեր օրերում, երբ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում հանիրավի իրարամերժ հակասական կարծիքներ են հնչում:

Այս բացառիկ հիմնարար ուսումնասիրությունը պատիվ է բերում ոչ միայն նրա հեղինակին՝ Նիկոլայ Հովհաննիսյանին, այլև հայոց գիտությանը՝ որպես նրա վերջին տարիների խոշորագույն նվաճումներից մեկը:

ԶՈՒԼԱԼՅԱՆ Մ. Կ.
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս